## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**2012Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «2012Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012Թ. ՄԱՅԻՍԻ 11-Ի N37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃՈՎ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով սույն գործի շրջանակներում պետական իրավասու մարմիններից լրացուցիչ նյութերի եւ տեղեկատվության ձեռքբերման ու համապատասխան ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի, 73-րդ հոդվածի 2-րդ մասի, 74-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Կասեցնել սույն գործի վարույթը:

2. Պահանջել ՀՀ գլխավոր դատախազությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանին տեղեկություններ տրամադրել դիմող Ն. Փաշինյանի դիմումի 1.4, 1.5, 1.6, 1.7, 1.8, 1.9, 1.10 կետերում հիշատակված փաստերի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկված համապատասխան միջոցների եւ դրանց արդյունքների մասին:

3. ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի դրույթների գործնական կիրառման վիճակը հետազոտելու նպատակով պահանջել ՀՀ վարչական դատարանից՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված հայցադիմումների հիման վրա հարուցված ընտրական գործերով կայացված դատական ակտերը:

4. Պահանջել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել գրավոր բացատրություն՝ պատասխանողի գրավոր բացատրության կապակցությամբ դիմողի՝ 2012թ. հունիսի 12-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված նկատառումների 1.2 կետի վերաբերյալ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ<br>ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

15 հունիսի 2012 թվականի<br>ՍԴԱՈ – 35